ՍԻՕՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԷՋԳԵՑԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1867

digitised by A.R.A.R.@



ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 10.

ՍԻՕՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31.
1867.

ԱՄՍԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ, ԵՒ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔԸ:

Ա.

ՄԱՐԴՍ որ և է վիճակի և աստիճանի մէջ ալ գտնուած ըլլայ, ենթակայ է միշտ տրտմութեանց. և ինչպէս որ անհրաժեշտ է իւրեն մարմնական կենաց պահպանութեան համար կերակուրը, նոյնպէս բարոյական կենաց համար անխուսափելի համարուած է նորա տրտմութեանց գործողութիւնը: Մարդս կը ծնի տրտմութեանց ներքեւ, կ'ապրի զանոնք կատարելու համար, և կը մեռնի իւր փառքն ու պատիւը կամ՝ անպատուութիւն ժառանգելով՝ նոյն տրտմութեանց հաւատարիմ կամ անհաւատարիմ գտնուելովը:

Մարդս որչափ որ լաւ աշխարհի բարձր ու գերագոյն դիրք մի բռնած ըլլայ, իւր տրտմութիւններն ալ նոյնչափ բարձր ու գերագոյն են. և այսպիսի մարդիկ կ'երեւի թէ անձնական պարտքերէ զատ՝ մի միայն ընդհանրութեան օգտին և նորա պահպանութեան և բարօրութեան համար տրտմութեանց տակ գրաւուած են. Նոցա կեանքն անհանգիստ մի կեանք չէ, այլ հասարակութեան, ազգի, և ժողովրդեան. ըստ որում՝ նորա տրտմութեանց

digitised by A.R.A.R.@

գործադրութիւնէն և գործադրութիւն հանգամանքներէն կախում ունի հաստատակութեան բարոյական և երբեմն եւս բնական կեանքը։ Մի քաղաքի կառավարիչ եթէ իւր պարտաւորութիւնը ճանչնալով՝ ժանտախտի ապառնալեաց դէմ նախազգուշութեամբ քաղաքը պահպանութեան ներքեւ չդնէ, ժողովրդեան կեանքը մահուան վտանգի մէջ կը ձգէ։ Ազգի մի հոգեւորական գլուխ եթէ մնորութեան կրօնի և բարոյ ապականութեան յայտնի ցոյցերու դէմ իւր հօտը պահպանելու չաղաց, նորա զեղծմանն և բարոյապէս և հոգեւորապէս մեռնելուն պատճառ կը լինի։

Օրինակներէս յայտնի է, որ երկուսակոսակ են այն վտանգաւոր ժայռերն՝ որոնց դէմ գերագոյն իշխանութեանց պարտաղանցութենէ հաստատակութիւնը զարնուելով կը վտանգուի, բան հոգւոյ, և բան մարմնոյ։ Երեմն յայտնի է թէ կրկին են գերագոյն իշխանութիւնք, մարմնաւոր ու հոգեւոր. և այս երկու իշխանութիւններն այնպիսի սերտ յարաբերութիւններ ու կապակցութիւններ ունին իրարու հետ, մինչպէս հոգին մարմնոյն հետ, որոնց միաւորութենէն կը բղխէ մարդուս կեանքը՝ որ է հոգի ու մարմին. և երկուց գերագոյն իշխանութեանց կապակցութենէ կամ մերձաւորութենէն կը բղխէ ընդհանուր մարդկութիւն բարոյական և հոգեկան կեանքը։ Այն ճշմարտութիւնս հին դարուց մարդիկներն մոռց կուրութեան ժամանակն անգամ զգացուած է. այն ժամանակներու ի մէջ, յորում՝ անշուշտ արարածներն ստուգութենէն պատիւ կ'ընդունին հեշտաւոր ու բնական արարածներէն։ Երբ մարմնաւոր իշխանութիւն գաւազանն կանգնած ժամանակներին, պրպաղան իշխանութիւնն այլ, ըսել կ'ուզեմ հոգեւոր ուսուցութեան աթոռն եւս նորա կից կը հաստատէին. և շատ անգամ նոյն իսկ իշխանին ուզղապէսը մի ձեռին թագաւորութեան գաւազանն բռնած, միւս ձեռաք բարձունքն առած, ու անթիւ բազմութիւն հպատակաց իւր եռեւ ձգած՝ կրակի կամ անշուշտ կուռքի դիմաց զոհ կը մատուցանէր։ Ասկէ յայտնի է, որ գերագոյն աստիճանաց տէր մարդոց կրկին իշխանութիւններն իրենց անհրաժեշտ պարտաւորութիւններն ապահովապէս ի գործ դնելու համար իրարու օգնութեանց կարօտ են, և նոյն կրկին՝ աշխարհական ու արքայական պարտուց պահպանութեան և կենդանութեան շուն ու ոչ են իրարու մերձաւորութիւնն և սերտ կապակցութիւնը, որոնցմէ կ'ընդունի նաեւ հաստատակութիւն իւր հոգեւոր և բարոյական կեանքն ու մարմնական կեանց պահպանութիւնը՝ նկատմամբ ընդհանրոյն։

Երբ ճշմարիտ Աստուծոյ ծագեցաւ յաշխարհ, և մարդիկ թօթոուեցին իրենց վերայէն հին մարդոյն զգեստը, մերկացան զարդեշնական և կիւնիկեան իմաստասիրութեան նիւթաստաշտ սկզբունքներն՝ որոնք մարմնական ու երկրաքարշ կրկին պաշտամանց շաղուածք էին, և դարձաւ մարդկութիւն ի լոյս աստուածգիտութեան. և թէպէտ մեծ և զգալի յեղափոխութիւն մի տեղի ունեցաւ մարդոց բարոյական և հոգեկան վիճակին մէջ, այսու ամենայնիւ նոյն կատարեալ հաստատութեան ընդունեաց մեկ սկզբունքը, այն է հոգեւոր ու մարմնաւոր իշխանութեանց կապակցութիւնը չուրացաւ, բան խնամարով որ նոցա կապակցութիւնէն կախում ունի մարդոյս բարոյական կեանքն ընդ մարմնաւորին։ Սոյգ է որ քրիստոնէութեան առաջին աստուածային դարուն մէջ ը-

digitised by A.R.A.R.@

ասծխ հակառակը կ'երևի, և կը տեսնենք՝ որ առաքելոյք առանց մեռան ունենալոյ աշխարհական իշխանութենց հետ, իրենց հոգևոր իշխանութիւնը ըստ ի Քրիստոսէ՝ թագաւորաց թագաւորէն ընդունելին, անկախ բոլորովին անոնցմէ ի գործ կը դնեին իրենց սրբազան պարտաւորութիւնն ու պաշտօնը. բայց կարելի է դիտել որ նոցա ժամանակ քրիստոնէական կրօնքն կրրեւ նոր աղանդ մի հասարակութեան առջեւ. տէրութիւնք կարելի չէին տաւած և չէին ընդունած, այլ միայն ռամիկ ու ապէտ անպաշտ ժողովրդոց մէջէն իրենց եկեղեցիներ կը առանցին առաքելոյք. և ասոյգ է որ եթէ գոնուէր այնպիսի տէրութիւն մի, նոցա հովանաւորութեան ներքեւ և անոնց ձեռնտուութեամբն աւելի կը դիւրանայր դարձերը, ինչպէս յայտնի է այս մեր ազգային պատմութենէն։ Թագէոս առաքեալ երբ Աբգարու քով իրկուեցաւ Փրկչի կողմէն՝ նորա բժշկութիւն տալու և Քրիստոսի առաջնորդութեան վերայ ունեցած հաւատն հաստատելու, անոր քովէն երբէք չդարձուեցաւ, մինչեւ որ նորա ձեռօք և ազդեցութեամբ տարածեց քրիստոնէութիւնն Էդեսիոյ քաղքին մէջ. «Հրաման տուր, կ'ըսէ անոր, առ վաղիւ, և ժողովեա առ իս զամենայն քաղաքս, և սերմանեցիս ի սմա զբանն կենաց, զոր քարոզեմ առ ոչի ձեր վասն գալստեանն Քրիստոսի, թէ զնմանէ ելիւ. և յաղագս Հօր առաքելն նորա...»(1)։ Աբգար ոչ միայն հրամայեց կուռաց թագաւորանիստ քաղքին մէջ Ներքարա կոչուած տեղը հաւաքելու, այլ և այնչափ արտօնութիւն կը շնորհէ, մինչեւ սրբազան առաքեալն Թադէոս մեծ ու կարեւոր ազդեցութիւն մի կը ստանայ ժողովրդոց վերայ. վասն որոյ նորա հրապարակաբար քարոզութենէն յետոյ, եկեղեցի մի եւս չենելու հրամայեցաւ զկնի կ'ըսէ անոր. «Որ ոչ ես բան քո տիրէ և իշխէ ի քաղաքիս յայսմիկ, նայնպէս առանց նոր իրակի (ներկայացուցչի) մոցես առաքս հաստատակամութեամբ յարգարանս պատուոյ թագաւորութեան խնդ»։ Հոն մնաց Թադէոս քանի մի ժամանակ, ձեռնադրեց իբրեւ առաջ Աղդէ կեղրապատպիսկոպոսութիւն, և նորա յանձնելով իւր նորածին եկեղեցին, ինքը գնաց դէպ յարեւելս քարոզելու։

Այս ամէն ինչ կը մակաբերուի՝ եթէ ոչ սա անժխտելի հետեւութիւնը թէ, հոգեւոր իշխանութեան զարգացման, կամ ուրիշ բառիւ՝ եկեղեցւոյ յառաջադիմութեան և Աւետարանի վարդապետութեան ծաղկելուն մեծագոյն կարեւորութիւն ունի մարմնաւոր իշխանութեան նպաստն ու զօրութիւնը։ Վասն զի հոգեւոր իշխանութենէ կը բղխէ սուղղակի ժողովրդի մի բարոյական կեանքն և առ մարմնաւոր իշխանութիւնն ունենալիք պարտուց ճանաչումն և հնազանդութիւնը։ Թագաւորը կը հրամայէ, օրէնքներ կը հաստատէ. կրօնից պետն և եկեղեցւոյ գլուխը նոյն հրամանաց և օրինաց հնազանդելու համար ժողովրդեան սիրտերը կը պատրաստէ և միտքերը կը համոզէ։ Կրօնապետը բուն իւր կարգին նոցա հոգեւոր զարգացման և հաւատոյ հաստատութենէ համար հրահանգներ կը հրատարակէ, ուղղութեան կանոններ կը դնէ, եկեղեցւոյ մէջ ծագած երկպառակութիւններն և հերձմունքներն արմատախիլ ընելու համար ձիգեր կը թափէ. թագաւորը նորա ջանիցը նպաստիչ և զժողովրդը նորա սրբազան կանոնաց անմեղաբար հնա-

(1) Գերբերեալ ի պատմ. Աբգարու և Թադէի։

digitised by A.R.A.R.@

ուրեմն թե թագաւորն որ իշխանութիւն կը բանեցնէ, առանց միջնորդութեան կանոնաց կարգաւորելու և հակառակ հանդուրժողութեան: Այսպէս անհաւատ զարգացած են կրկին իշխանութիւնք, այնքան կը հաստատէ մեր ազգական զգացմունքն: Տրդատ՝ թեպետ որ յառաջ քան ըզդարձ իւր Աստուծոյ պաշտամունքն հաստատելու համար ծառայելն ի գործ, նորա հաստատուելուն եւս ջանացեալ էր ու հանդուրժողութիւն էր, նոյնպէս կենի թ զարձին՝ ձշմարիտ Աստուծոյ պաշտամունքն յառաջագոյն ունելն և հաստատուելն հաւատոյ ամենայն եւ թագաւորն իշխանութիւնք կը բանեցնեն որպէս՝ Դրիգորի՝ Հայոց որի՝ հաստատութեան բանաւորքին հոգեւոր ձգտելով: Սուրբ Հայրապետն թագաւորն ներարկիմն եկեղեցոյն կանոնեանք և հրահանգեանք և հրամանեանք կը հանէր, և ասորին Տրդատ թագաւոր պաշտպանութեամբ զանոնք գործադրել կարացաւ: Նոր անդր քան զառաջնին՝ նորա անօրէնութիւնք ոչ միայն եկեղեցիներ, այլ և վարդապետարանեանք, ժառանգաւորանոցեանք, և ասիրիշ հոգեւորական հաստատութիւնքեր կը հիմնարկէր. և ժողովրդեան կրօնական և բարոյական զարգացման համար ամենայն ջանք և նոպատ ի գործ կը դնէր մի միայն որպէս Դրիգորի՝ եկեղեցոյ Վրայն անօրէնութեամբ:

Այդ՝ խնդրաւոր է որ երկու գերագոյն իշխանութիւնք իրենց պարարտ ցանկանալն համար իրարու ձեռնարկութեան կը կարօտին. և երկու իշխանութիւնք եւս իրարու հետ այնպէս սերտ կապակցութիւն մի ունին, թեպետ և օրինակի համար հոգեւոր և մարմնոյն կապակցութիւն ունեցած յարաբերութիւնքին, առանց որոյ ոչ մին կ'անձնաւորի և ոչ միւսն կ'ապրի:

Այս համաձայնութիւն երկոցունց գերք առեւած են քրիստոնէական աշխարհիս մէջ. և երկու ամենայն իրարու կից և համահաւասար պատուով հանդիսացած են, ընդունելով ժողովրդոյն՝ որուն զհարկ զհարկին, և ուրուն զպատիւ՝ զպատիւն. և չեն պակցած հաստատելու ամենայն միջոց զկացսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ: Այլ եկաւ ժամանակ որ եկեղեցոյ մէջ գաղափարն և մտածութիւնն ազատութիւն անհամաձայնութիւնքեր և երկպառակութիւնքեր ծագելով, և ասանք ժամանակին հետ աճելու մի սատանայով և ընդարձակուելով, մանաւանդ թէ կրնայ և հաւատոյ խնդրոյն մէջ անձնական կիրքեր և շահեր խառնուելով նոյն խոկ եկեղեցականաց մէջ, որոնց յետոյ մարմնաւոր իշխանութիւնք եւս իրենց կողմնակցութեամբն ուժ տալով նոյն երկպառակութեան, հետեւապէս հոգեւոր իշխանութեան ուժը թուլցաւ, ժողովրդեան մէջ իւր ունեցած առաջին գիրքը կորցաց, և եկեղեցին սկսաւ թերթիւ կերպով մի ապրիլ, և հոգեւոր ու բարոյական շահերը վտանգի մէջ իսկնիլ: Այնպէս որ ժամանակի խնդիր մի դարձաւ նոյն ամենակարեւոր վիճերն, որ թեպէտ բանիք՝ եկեղեցիին դուրս ելնելով քաղաքականութեան հետ խառնուելցաւ, և երկու գերագոյն իշխանութեանց մարմնաւոր և հոգեւոր իրաւասութեանց մէջ անհամաձայնութիւն արմատ գտաւ: Այսպէս շարունակեց ժամանակ մի եւս, մինչեւ որ եկեղեցական իշխանութիւնն ուրիշ ապրելի կերպարանք առացաւ. հոգեւորական գլուխներն սկսան եւս ապրակ խորին հետ թագաւորական թագին ալ պատիւ, և իւր բարոյական ուժը՝ գինու ու բանակի զօրութեան փոխանակել, թեպէտ

digitised by A.R.A.R.@

է Հռոմայոց պատերը. մարմնաւոր իշխանութիւնք եւս հոգեւորական իրաւասութիւնն իրենց սեփականել, և թագաւորելոյն միանգամայն և քահանայապետել, ինչպէս են Ռուսաց կայսերք և Նոր Թագաւորք։ Իսկ ինչ են Բրիտանիոյ եկեղեցւոյն հակառակ քրիստոնէութեան ոչ այն ընդունած դիցմուրեքերը, եթէ ոչ՝ հոգեւոր իշխանութեան անկումն, զոր Եկեղեցական կութիւնց եւ հերձուածողութեանց երեսէն կրեց։

Ի ԽՇՏԵՆ։

Յովհաննէս Հուս։

Յովհաննէս Հուսի պատմութիւնը յետին թշուառութեան զգալի օրինակ մի կրնայ ըլլալ մարդոյս. երբ մելամաղութեան հետ գոռոզութիւնն ու կամակորութիւնն ալ միանալու ըլլան։

Չորեքտասաներորդ դարու վերջերը ծնաւ Յովհաննէս Հուս՝ անծանօթ ծնողացմէ. այն միջոցին՝ յորում արեւմուտեան մեծ հերձուածութիւնը բոլոր մարդոյ խղճմտանացը մէջ խռովութիւն սկսեր էր ձգել։ Այն նորաձեւ հերձուածութեանց թունաւոր կաղնեխիկ սկսած էր Յովհաննէսի սիրտն ու միտքը ապականել, և անոնց մէջէն ծծեց առաւ վարդապետութիւն մը՝ որ բան զամէն վարդապետութիւնները յանդուգն էր ու կործանիչ։ Իրականի համարատանէն կատարեալ 1409 թին, և նոյն ժամանակներուն Պոհեմիայի թագաւորն Սոֆիայի խառնուածահոյր եւս կարգուելով, ճարտարութեամբ մի յարաբերութիւններ հաստատելոյ պատութեան ամենէն երեւելի ու զօրաւոր մարդոյ հետ, որմէ ցանկալ իր հակառակորդաց երկիւղ մը սկսաւ տալ նախ, և շատ չանցած՝ գլուխ բարձրելով վերանին կրկնախառայը։ Թագուհոյն կողմէն մէջերը պիտա բլլալով, և մեծաւորաց Վենկլասաւ Թագաւորին անհոգ ու անզգայ ընթացքէն որ իր հաճոյքներէն ի զատ ուրիշ բան ամենեւին չէր մտածեր, հանդգնութիւն առաւ Ուիկլէֆի գրոց հրապարակաւ ընթերցանութեան հրաման հանելու, որոնց վերայ իրեր մեծ զարմանք ու գովութիւն ցոյց կուտայր։ Ուիկլէֆի վարդապետութիւնք՝ այն իսկ բազմաբանաց վարդապետութիւն էր, որոնք իրմէ հարիւր տարի յետոյ երեւեցան աշխարհիս վերայ. բայց Յովհաննէս Հուսի վարդապետութիւն՝ որ կրօնական գաղափարներու, աղաւաղութեան հաւատարութեան և եղբայրակցութեան վերայ հիմնուած ընկերական սկզբանց խառնուրդ մի է, բարբարոսի ուրիշ զօրութիւն մի ունէր, և մարդոյ եւանգոտ կրից դէմ ուղղուած բլլալով՝ աւելի հեշտ ընդունելութիւն և վարկ ստացաւ։ Ասոնց ետքը և բրիշ ժամանակի մէջ բազմաթիւ աշակերտներ ունեցաւ, և անպատժութիւնն ալ ինչպէս յայտնի է՝ անոնց հանդգնութիւնն աւելցուց. և այն ատենները յանդգնութեան հասցուց զանոնք, մինչեւ զիրենք զապելու համար պաշտօն ունեցող մարդոյ զօրութեան հաւատալով։ «Օրութիւնը զարդասկրութիւնն ու հեշտութիւնն արմատաբար խլելու համար. կ'ըսէին նոքա, հաւ և սաւ պէտք է, թէ պէտ և յանցաւ որեւէր խորհրդաւոր քաղքենաւոր ծածկուած բլլան։» Այս բաներս Աէնդ — Օֆֆիւ ընթացքին և վարմունքին շատ կրնանին։

Իրաւ է որ Յովհաննէս Հուս այս վատաւնաւ ուսանդուն կիրքերուն մէջ ինքը բոլորովին խաղաղ ու հանդարտ

digitised by A.R.A.R.@

կերեւէր արուսաբուս. յուզմունքն ու նախանձախնդրութիւնն չափազանցութիւնն և բարկութիւնն իւր աշակերտաց թոյլ տալով, որոնց մէջ ամենէն նշանաւորն՝ Իրակացի Յովհան օր մի այն առաքման զայրացաւ իւր մէկ հակառակորդին, որ բռնեցին ու Աստուած գերեր նեռելը մէկ բրաւ։

Այս նոր հերձուածողութիւնն բրած յառաջադիմութիւնն վերայ փախնողով Հռոմէական Աթոռ, Աղեքսանդրիա և որոշ դէմ, և զինքը եկեղեցականութենէ արգիլեց։ Այն ալ առաջ դէմ բողքեց Գոտանցոյն մէջ գումարելիք ժողովին, և 1414 հակառակ բեր առնոյն մէջ անձամբ այն քաղաքն գնաց՝ ըստ ուսուց Միքիլենոս Թագաւորի պահանջման զօրաց հետ, և բան ասելոյ՝ առանց զինուորի։ Իւր այս պարագայն քննադատութիւնն զգալի ու ուարկայ չէ, թէ և անբաւական բարկութիւնն նեղքեւ ինկած է։ Սակայն այս յայտնի է, որ Յովհաննէս Հռոս եկեղեցական պաշտօնէ արգելուած ըլլալովն ալ հոմարձակեցաւ պաշտօն կատարել, քարոզել, ժողովներ հաստատել՝ ի պաշտպանութիւն իւր վարդապետութեան։ Իւր հաստատութիւնն նպատակաւ գումարուած ժողովի մի ներկայութիւնը նոյն իսկ կոմիտիկութեան հիմերը հարուածեց։ Կայսրը 1412 հոկտեմբեր 9 ին բանտարկել տուաւ զինքը. ուսկէ փախչելու համար անօգուտ ջանքեր ընելէն յետոյ՝ ժողովոյն առջեւ բերուեցաւ։ Կրսթրէպենի ամրոցի շեմիրին վերայ՝ ուր բանտարկուած էր, շղթայակապ տեսնուած պահուն, իւր աշակերտաց մէկ քանին իրենց վարդապետը այնպիսի նեղութիւնց մէջ տեսնելուն, մոլեռանդութիւններին ասաստկացած՝ ուզին անոր ձեռքերը համբուրել, հանդերձներուն քսուիլ, առջեւը ծնկան վերայ գալ, և իւր օրհնութիւնը խնդրել։

Յովհաննէս Հռոս ամենեւին չմեղմացաւ իւր գաղափարներուն նկատմամբ կայսրութիւնն առջեւ, որոնք անոր մոլորութիւնները դատապարտած ժամանակ կարեկցութիւն ցուցնելիք ոչ ցոյց կուտային իրեն։ Իւր ազատելն հրաժարելու թղթի մի օրինակ գրեցին այնպիսի ոճով մի, որ կրնար անոր անձնասիրութիւն անելու պատճառ, բայց ամենեւին յանձն չառաւ անոր ստորագրութիւն դնել։ Սիկիզմնոս կոչուն անգամ՝, որ կարելի է ինքն այլ գաղութիւնը կլսէրը, այսու ամենայնիւ անոր ապառնոյզ մնալու վիճակին վերայ սիրտը չարժելով իւր գիտնոց բերել տուաւ և ըսաւ անոր. «Ինչո՞ դէմ կրկին նա՝ չես ուզեր հրաժարիլ մոլորութիւններէ որոնք քոյդ չեն։ Այս պատրաստ եմ որ և իցէ մոլորութիւններ մերժելու, ուսկէ կրնանաս որ ես զանոնք ոչ պաշտպանած և ոչ գործած եմ։» Իսկ Յովհաննէս Հռոս փոխանակ զանոնք ուրանալու՝ աւելի սիրեց զանոնք քան իւր արուսաբերութեան, թէ ը-է որ ը-ան գ ՀԷԸ ՅԳԷՆ -- ԺՈԼԸ ՆԷԳԷՆ ՀԼ։ Մեռելոց ու անեղուսոյ բնութիւն մի, որ առանց իւր հանգուցեալ մը կարելոյ՝ նեղու՝ յետոյ կոչուելի ընելու ցաղափարին դէմ կեցաւ, և աւելի սիրեց ըմանհ քան թէ իւր մոլորութիւնը խոստովանիլ։

1425 յունիս ամսոյ 15 ին գաղաղարարեալ տարին զինքը՝ ի պատժարանք, անեմիս բաղնութիւն եռաւէն եբեմալով, որոնց մէջ կայրեն նաև իւր արբանեակներէն սրոնցնին այրած ու բոլորած մարդիկ։ Զարմանալի էր Յովհաննէս Հռոսի արիութիւնը, որուն նուն կուտայր իւր գաղափարու-

digitised by A.R.A.R.@

թիւնը, որ բնաւ երբէք պահ մի իւր վերացէն չդադաց, և փոյտակուտութիւն վերայ անդամ՝ ուր երբ մի սկսած էր, մինչև որ բոցերը գինքը չլափեցին՝ երդը չդադրեցուց։

Իւր աշակերտներն ունոր մեխիթարելը բարեբար ժողովեցին, որպէս հետ այրեցան նոքա։ Նորա դերեզմանը. ու մարգարէի մեխիթարներ են կ'ըսէին, և խրատ մատուցեր մեջերնին բամբեցին։ Այն մեխիթարներէն ծագեցաւ քաղաքական պատերազմ մի, որ քանի տարիի չափ բոլոր Գերմանիան արիւնարբու ըրաւ։

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻՒՐ ԳԻՐՔԸ

(Շարունակութիւն. տես թիւ 9)։

Այսպէս ուրեմն, Տէր իմ, որովհետև մեր սրտերը մեզմէ յառաջ Աստուծոյ հաւատքն ընդունեցին, թէ որ մեր պատերն գէպ ի սրտերը դառնալու բլլան, անոնց պատերն եւս գէպ ի մեզ կը դառնան. և ինչպէս բարձրեալն Աստուած կ'ըսէ. «Մէկ ժողովուրդ, մէկ հոգի բլլան փառաւոր և յաղթող Աստուծով»(1)։ Որովհետև այս գործը ուրիշ կերպ պէտք չէ որ մնացեմք, այլ միայն թէ անհաւատութիւնէ ի հաւատս, և ի վարդապետութիւն այն Արդարոյն՝ որ իւրեան հաւատացողներուն փրկութիւն վարդապետ է։ Եւ ինչպէս որ Դաւիթ նորա համար կ'ըսէ. «Աղիկաց նոա է՝ որս քահանայութիւնը յաւիտենական է քան կարգի Մելքիսեդեկին», ինչպէս որ մնացեալ զոհ հայրն և գինին։ Նոյն Մելքիսեդեկ Աստուծոյ բարձրելոյ քահանայ էր Աբրահամէն յառաջ։ Եւ տես, Տէր իմ, թէ փշաբեր տարբերութիւն կայ Աբրահամի զոհին և այն Տիրոջն արդարոյն զոհին մէջ. «Գնաց Տէր՝ իմ Տիրոջս, դու ես քահանայ յաւիտենական»։ Ամ. ՃԺԹ, և ոչ ժամանակաւոր, ինչպէս Աբրահամ՝ որ հարիւր քսան տարեկան մեռաւ։ Եւ ասոր զոհերն միս էին, իսկ այն Տիրոջն արդարոյն հոգ ու գինի էր ըստ կարգին Մելքիսեդեկի։ Որ այս խօսքերուս եւս մարգարէին ձեռք յայտնի կ'ընէ, թէ Աբրահամի զոհը վախճան կ'առնու, երբ յաւիտենական զոհն սկսելու լինի. և կարգն այն ժամանակ կը սկսի, երբ հայրն ու գինիին զոհը սկիզբ կ'առնու, որ և պիտի տեւէ յաւիտեան։

Սակայն ասոր համար ուրիշ բաներ եւս ունիմ. Տէր իմ. բայց քանի մի խիստ յայտնի եղածներ որչափ որ գտած եմ Աստուծոյ սրտիք ընտրածներուն վերայ՝ խօսիմ։ Անոնց համար բաց Աստուած Յիմնի սրտոյն բերանով Ա գլխոյն մէջ. «Տեղ մի ըլլայ, որ լսուի թէ դուք կենդանի Աստուծոյ սրտիքն էք»(1)։ Եւ բաց առեալ, Տէր իմ, անշուշտ եկեղեցին է. իսկ Յիսուսկիսին՝ որ առաջին տեղին էր, կայր (այն ժամանակ). և Աստուած Մովսէսի և Հարունի և բոլոր մարգարէից բերանով Նոդրանիկ իմ կ'անուանէ, և զանոնք ծառայ կը կոչէ եղանուանապէս և յաւիտեանապէս. մինչև որ բարձրեալն իսկ խիստ յայտնի եղերպով Աստուծոյ սրտիք կ'անուանէ մարգարէն։ Եւ նոյն սրտոյն համար կ'ըսէ Աստուած Մովսէսի բերանով Ե օրինաց ԼԲ գլխոյն մէջ. «Արդարոյ արեան վրէժը կը խնդրուի, և իւր

(1) Այս վկայութիւնս չկայ։

(1) Յիմնի սրտին Ովսէ մարգարէն է. որ կը սէ Ա գլ. 10. «Եւ եղիցի ի տեղւոջ յորում ասացաւ՝ ոչ ժողովուրդ իմ դուք. անդ կոչեսցին նոքա սրտիք Աստուծոյ կենդանւոյ»։

digitised by A.R.A.R.@

ժողովրդեան երկիրը կը բնակուայ »(1)։ Եւ մեք՝ Տէր իմ՝ մարգարէներն քանդեցինք, և Աստուած անոնց հաւատարիմ վերժիրդիր չեղաւ՝ բայց միայն եօթանասուն տարի, և սպանեցինք Աբեդնեգոներն և անոնց որդոյ Վարդասան. և Աստուած վերժիրդիր եղաւ որդւոյ համար հազար տարի և այլ աւելի։ Եւ անոնց մեհեան հաւատարիմ չլսայ՝ թէ Աստուած Իսրայէլի որդւոյ երկիրը ըներայ, այլ իւր ժողովրդեան երկիրը։ Զսաւ նոյն որդւոյ համար բայց Դանիէլ մարգարէն մեզ. « Մինչեւ զօրաւորին ձեռքին մէջ նեռը, այնպէս են հաւատացեալ արդիքն այլ »(2). և մարգարէն այն հաւատացեալ որդիքը նեռի կը նեմանեցնէ, որ զօրաւորին ձեռքէն կը նեռուին։ Յայտնի սահմանակարողն Աստուած դէպ ի աշխարհիս տասնեւերկու կողմերն և չորս կլիմաներն խրկեց այն հաւատացեալ որդիքն, որ օրինաց՝ սաղմոսի և մարգարէից վարդապետութիւնները քարոզեն. իսկ Մովսէսն ու Հարսն տուրը տունէն դուրս ուղղ մի չթողեց օրինաց և մարգարէից վարդապետութիւնները քարոզելու. ոչ ի Հնդկաստան, ոչ ի Հռոմ, և ոչ ուրիշ ուղղ. բայց ի սուրբ երկրին։ Այլ այս հաւատացեալ որդիքն այսպէս աւաջարկուեցան և եկան Աստուծոյ աւաջին մեր ուղղը. և Աստուած սպանեցաւ Դանիէլն և զմեր անուանեն. և այս բանս լաւ յայտնի ըլլաւ Դանիէլ մարգարէն մեզ ասելով. « Դուն հայրերդ ուղղ որդիքդ ծնան, և հաստատուեցաւ զանոնք թագաւորներ և իշխաններ »(3)։

Եւ անոնց ձեռքը վերանորոգեցաւ աւաջին օրէնքն ըստ կարգի Մելքիսեդեկին որ Աստուծոյ զսէր հացով ու գինիով սահմանեց, և ասկէ գրաւեցաւ մինչեւ կ'երթայ՝ օրինաց մէջ, և Աստուծոյ բարեկամին Աբրահամին տրուեցաւ։ Անոնց ազատաւ որդիքն Աստուած մեր զսէր փոխեց, մինչեւ որ փոխեց մեր անուանն և մեր մարմնական օրէնքներն հոգեւորական օրէնքներու։ Եւ եթէ Աստուած մեր Մովսէսին ըսելու բլլայ՝ մինչեւ որ Դաւթի բերանով Մեսիային՝ այսինքն Քրիստոսին ըսաց. « Դուն ես քահանայ յաւիտեան ըստ օրինաց Մովսէսի և Հարսնի », մեր օրէնքները կը մնայ. այլ ըսաց. « Դուն ես քահանայ յաւիտեան ըստ կարգի Մելքիսեդեկին »։ Եւ Աստուծոյ բարեկամը հացին ու գինիին զսէրն հաղորդեցաւ և ոչ մսին զսէրն. ասոր համար ձայն կուգայ Մովսէսի խօսքն այլ որ ըսաց. « Կերէք հինեւորուն հինեւը »։ որով կ'իմանայ Մելքիսեդեկի զսէրը։ Եւ գրաձեալ կ'ըսէ. « Դարձ գարուն, այսինքն երբ նոր օրինաց աւելի զսէրը յայտնուի, հինը մեկդի թողուցէք »(1), այսինքն մեր հին զսէրը։ Իսկայն մեր Աստուծոյ եմք ամէն գիպուածոյ մէջ։

ԳԼՈՒԽ Ի.

Հրէից ընդդէմ խաչանոցին և տրիսոնէից սուրբ խորհրդոյն ընդդիմանալն։

Կը վախնամ՝ Տէր իմ՝ որ Աստուած իւր երեսէն թողուցած չլլայ զմեզ և մեր զսէրը, և հեթանոսաց զսէրն ընդունի, մինչեւ ըսաց Մատթէոսի բերանով. « Եւ ձեր վերայ կամք

(1) Զի խնդրի վերժ արեան որդւոյ նորա. և խնդրեսցէ վերժ և հատուսցէ զատամանս թշնամեաց, և առեսցէ հատուսցէ. և սրբեսցէ Տէր զերկիր ժողովրդեան իւրոյ։ Բ. Օրէ. Լ.Բ. 43։

(2) Որպէս նեռաբ ի ձեռս հզօրի. այնպէս են արդեքն թեմամարեալ։ Սաղ. ՃԻԶ. 4։

(3) Փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո. կա-

ցուսցես զնոսա իշխաններ ընդ ամենայն երկիր։ Ե-ղ. Խ.Դ. 16։

(1) Եւ կերիցիք զհին և զհնոյ հին, և զհին ի-նչեսցուք հնոյն համարիցիք ի բաց։ Գ.Թ-որ. Ի.Զ. 10։

digitised by A.R.A.R.@

չունիմ, կ'ասէ Տէր, ձեր զոհը չեմ ընդունիր. վասն զի արեւելքէն մինչեւ արեւմուտք իմ անունս մեծ է հեթանոսաց մէջ, որոնք իմ անուս անս մարուբ զոհեր կը նուիրեն »(1)։ Աբելին Աստուած հեթանոսաց զոհը քան զմերն աւելի սուրբ կը համարի. և սոնոց վերայ Աստուած գովեց զմեզ սուրբ զոհ մատուցանելէն. որպէս զի բրիստոնէից ապրիլցընէ որ մեզմէ հեռի կենան որ չարչարուին, ինչպէս և մեր հեթանոսներէն կը փախչէինք միշտ երբ մեր զոհը սուրբ կը համարուէր Աստուծոյ կողմէն, և օրինաց մէջ ընդունելի էր։ Այսու Տէր իմ, գիտես դու թէ ինչ ըսաց Աստուած մեր զոհին համար Դաւթի մարգարէի բերանով. « Հէք գիտեր որ ես երբեք ցլերու միս չկերայ, և ոչ նոխազներու արիւն խմեցի (2). » և այս խօսքով կը յայտնէ Աստուած թէ ինքը մեզերու զոհը կը դատապարտէ. և մեր տէր իմ, որ անկէ ընդունեցինք զայն, անեղաւոր և անհատատատ կը համարիմք հեթանոսաց հացով և գինիով բրած զոհը, զոր Աստուած սահմանեց. և նոյն զոհով կը յանդիմանէ մեզերու զոհը այն ժամանակէն որ Սողոմոն Հարանի զոհին համար այսպէս կըգրէ. « Այս, իմա Հարան, իւր ձեռքերը սեղանին վերայ կը տարածէ, և խաղողի արիւն և խունկ կենդանի Աստուծոյն կը բերէ, և մեր զոհը երկրին հաւնուներէն. ինչպէս որ Մինչ քիսեդեկ Աբրահամու առաջն բերաւ (3) »։ Դարձեալ կըվկայէ Աստուած Ովսէէ մարգարէի բերանով ԺԹ գրքոյն մէջ, թէ մեր հացի զոհը մատուցինք ըսելով. « Ինչպէ՞ս մեր հացի զոհ բերինք, վասն զի ձեր հացերը նեղութիւն են. անոնցմէ ուտողը պիսի սղծուի (4)։ Աբելին մեր մէկ անգամ հացի զոհ մատուցինք, բայց և ոչ մէկ զոհ մեր ձեռօք մատուցուած՝ ընդունելի եղաւ Աստուծոյ։ Այս մեր մեղքէն զոհին համար Ովսէէ մարգարէն Ելթանի որդին ԹԳ գլխոյն մէջ կ'ըսէ. « Աստուած բարեպաշտութիւն և ողորմութիւն կը սիրէ քան թէ մեղերու զոհը (5) »։ Այս հեթանոսաց զոհը Աստուած Ովսէէի ձեռօք կըդատապարտէ։ Եւ Սոփոնիայ ԻԳ գլխոյն մէջ. « Աստուծոյ զոհ մատուցէք գետնի քարուքանդներէն, և ձմրուած խաղողէն, և Աստուած զձեզ և ձեր ամէն գործքերն օրհնէ (6) »։ Այս գիտեմ, Տէր իմ, Աստուած սկիզբէն հրամայեց որ սերմանի ուխտի տապանակին առաջն հաց դնենք և ոչ միս։ Այսու Եղկեայ գրքին ԻԹ գլխուն մէջ կ'ըսէ Ովսէէին, որ նոխազներ նուիրեն և անոնց հետ անխմոր հացեր (4). և այս անխմոր հաց բրածն ոչ՝ հեթանոսաց զոհն է։ Դարձեալ, տէր իմ, այս բանիս համար Աստուած Եղեսացոց գրքին ԻԱ գլխոյն մէջ հրամայեց Ովսէսի ձեռօք Հարոնին՝ ըսելով. « Հարանի սերմէն եղող մարդն որ արատ ունենայ, հացի զոհ թող չմատուցանէ, և ոչ ուրիշ զոհ մի (5) »։

(1) Զի ոչ էն կամք իմ ի ձեզ՝ ասէ Տէր ամենակալ. և զպատարագս ոչ ընկալայցի ի ձեռաց ձերոց։ Զի յարեւելից մինչեւ ի մուտս արեւու փառաւորեալ է անուն իմ ի մէջ ազգաց. և յամենայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ և պատարագ սուրբ. զի մեծ է անուն իմ ի հեթանոսս՝ ասէ Տէր ամենակալ։ Մաղ. Ա. 10. 11։

(2) Ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց. և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։ Սաղ. ԽԹ. 15։

(3) Ա՛յս պարբերութիւնս չկայ սուրբ գրոց մէջ։

(1) Զոհք նոցա իբրեւ զհաց ագոյ եղիցի նոցա. ամենեքեան որ ուտիցեն ի սմանէ պղծեսցին։ Ովս. Թ. 4։

(2) Զի զողորմութիւն կամիմ. և ոչ զպատարագ. և զգիտութիւն Աստուծոյ՝ քան զողոկեզս։ Ովս. Զ. 6։

(3) Եւ զզոհն իւր երկուս տասանորդս նաւչոյ զանգելոյ իւրոյմ. զոհ Տեառն ի հոտ անուշից Տեառն. և նուէր նորա չորորդ մասն դօրակի գինւոյ։ Ել. Ի. 13։

(4) Ասացեալ զուարակ մի յանգոյ. և խոյս երկուս անարատս. և պատեալ բաղարջս և շրթունս բաղարջս զանգեալս իւղով։ Եղէ. ԻԹ. 1. 2։

(5) Սմենայն որ յորում իցէ արատ. ի զուարակէ

digitised by A.R.A.R.@

Տես, Տեր իմ, թէ ինչա՞ հատեալ հայցի զոհը մէջ կրբերաւ։ Աստուած կ՚ըսէ Մովսէսի ձեռօք Ղեւտացւոց ԻԳ գլխոյն մէջ. «Աստուծոյ զոհ մատուցէք ձեր ամէն բնակութիւններէն, երկու հաց նախաձիւներաւն, և հացին հետ եօթը գառ (1)»։ Տես, Տեր իմ, առաջ հացերը կրդնեն և յետոյ միսերը. և աւրիշ տեղեր եւս կրկարդամք, ինչպէս որ գիտես, Տեր իմ։ Յիսուս սրբելին և փառաւորն ըսաց Իսրայէլի որդւոց. «Երբոր ձեր բնակութիւնն երկիրն մտնելու ըլլաք՝ զոր տեր Աստուած պիտի տայ ձեզ ժառանգելու, Աստուծոյ զոհ հաց մատուցէք և ողջունգամ զոհեր, նաեւ գոլորակ՝ մաքուր ալիւրով մի կտոր (2)»։ Ուրեմն Աստուած հրամանն ըրաւ որ հայկ և մաքուր ալիւրէ ըլլայ զոհն, և զայն ընդունելց ինքը։

Եւ հեթանոսաց այսօրուան մատուցած զոհերնին այնպէս է, այսինքն մաքուր ալիւրէ հաց։ Կրսեւ հացին զոհը Ա. Թագաւորաց ԻԱ. գլխոյն մէջ եւս կրկիշատակուի։ «Երբ Դաւիթ եկաւ Աքիմելէք քահանայապետին Նովեան (3), և հաց խնդրեց ա՛նոր մէջ, պատասխանեց քահանայապետն թէ՝ հա հաց չկայ, բայց միայն առաջաւորաց հացը, զոր արժան չէ որ ուղղագրգ ուտեն, վասն զի սուրբ է»։ Եւ այս բանիս հացի զոհին հատեալ է. և ուրիշ շատ ապ կրնամ ըսել զոր գտա գիտես, Տեր իմ։

Եւ որովհետեւ հեթանոսք ջուր եւս կրխառնեն իրենց զոհին մէջ, այս այլ մեղ անվայելուչ ջերեւիր, վասն զի սուրբ գրոց մէջ ջրի զոհ եւս կայ Աստուծոյ մատուցուած, և ընդունելի էր իրեն։ Բ. Թագաւորութեանց ԻԳ գլխոյն մէջ այլ կը գտնենք. թէ երկու ազգաք Իսրայէլի առջեւն եղած հրեն ջուր քաշեցին, և Դաւիթ այն ջուրն Աստուծոյ նուիրեց։ Ուրեմն գրուածին ներհակ չէ՝ երբ հեթանոսք ջուր կրխառնեն այսօրուայ օրս Աստուծոյ մատուցուած զոհին մէջ։ Անք ինչպէս որ ըսի, կը կարդամք՝ թէ Հարան հայէ ու գինիով զոհ մատուց Աստուծոյ. և Դաւիթ ջրէ. և այս երեքը մէկ զոհ կրկոչէն մաքուր՝ արշաւ որ բնութիւնը կ՚ընդունի և մեր միտքն արշաւ որ կրնայ գտնել զոհ մի որ գէր ու փափուկ ցլերուն մեր զոհին հետեւի։ Եւ զնա մարգարէն, ինչպէս որ կրպատմուի Գ. Թագաւորաց գրքին մէջ, մեր զոհին վերայ ջուր վարեց, և Աստուած յերկնից կրակ խրկեց և ջրով ցանուած զոհն ընդունեց. և հրեշտակի կերպարանքով Երկնային երեւելով հայցի նկատակ և ջուր տուաւոր. և նոյն կերպարանքն զորութեամբ քառասուն օր Ճամբայ գնաց մինչեւ Աստուծոյ լեռան. և այս գործս այլ բնութիւնը չկարեր ուղղել ու գլուխ հանել։ Այլ գեղեցիկ և յարմար զոհը գինիէ և ջրէ խառնուած՝ Սողոմոն մարգարէն կրգրէ Առակաց գրքին մէջ ըսելով. «Խարձրելոյն խմատութիւնն իւր զոհը տուաւ, և անդան պատրաստեց։ Այն ժամանակ խրկեց իւր ծառաներն ըսելով. ով որ ողոյ մանուկ է՝ թող գայ իմ քովս, և խել

Ահարոնի քահանայի։ Մի՞ մերձենայք մատուցանել զոհս Աստուծոյ քովն. զի արատ գոյ ի նոսա, և զպատրաստեալն Աստուծոյ մի՞ մատչիցի մատուցանել։ Ղեւ. ԻԱ. 21։

(1) Ի բնակութիւնք ձերում մատուցանիցէք պանս նուիրեալս։ երկուս պանս յերկրէ ցորանոցդ ելանիցի պանս մի։ խմորեալք եփեսցին յառաջնոց արդեանց քոց Տեառն։ Ղեւ. Լ.Գ. 17։

(2) Այն վկայութիւնը չկայ։

(3) Սիրն անունը հեթանոսներ մէջ Նոմբա կամ Նոմբա թարգմանուած է։ «Եւ եկն Դաւիթ ի Նոմբա առ Աքիմելէք քահանայ . . . և ասէ ցնա՝ Եթէ իցէ ի ձեռին քում հինգ նկանակ հացի՝ տուր ի սեռս իմ։ Պատասխանեաց եւ քահանայն Աստուծոյ և ասէ ցԴաւիթ. ոչ կայ հաց պղծի ընդ ձեռամբ իմով. այլ հաց սրբութեան. և եթէ իցեն զգուշացեալ մանկունքն ի կանանց կերիցին»։ Ա. Թագ. Լ.Ա. 1-4։

digitised by A.R.A.R.@

քիչ պակասելու թող ու ասեն իմ հայս և խանձն իմ գինիս ջրով խառնուած (1)։ Ի՞նչ է, Տէր իմ։ բարձրելոյն խնամատարութենէն պատրաստուած անդամներ եթէ ոչ զոհարանք։ Այս ուրիշ ինչ պիտի ըլլայ, Տէր իմ, հայն ու խառնած գինին, եթէ ոչ հայով, գինիով ու ջրով եղած զոհը՝ որ զոհարանին մէջ կրնին։ Խելքէ պակաս եղողներն զոր խնամատարութեան ծառայից ձեռաք կրկանչէ, ուրիշ ամ են՝ եթէ ոչ հերետիկներն որ զԱստուած չէին ճանչնար և Աստուծոյ ձեռաք կանչուեցան։

Այս նշանակութեան արժանի է որ կ'ըսէ՝ կերէք իմ հայս և խմեցէք իմ գինիս, որովհետև Նոյա (Պրիսատ.) ձեռաք կը յայտնէ այն զոհին Աստուծոյ հաճելի ըլլալը, և թէ այս քան բարձր ու հոգեւորական անդամներն մեր հայրերը չկանչեց՝ որ օրինաց մէջ խնամատարեն էին, և օրինական զոհին պատուոյ յարած, և չմոռացաց մեզ ողջակիզութիւնք, այլ զրկեց զմեզ նոյն զոհէն, որ հրեայ հազար տարի է, և այս բանս մեզ պատահեցաւ այն Աստուծոյ զկնի մեզանչելոյս համար, ասկայն Աստուծոյ եմք։

Ի յաջորդն։

(1) Խնամատարութեան... զնոյն զոհնիս իբր, և խառնեաց ի խառնելիս զգինի իւր, և պատրաստեաց ըստ սեղանն իւր։ Եւ ասացեաց զծառայս իւր կոչել բարձր քարոզութեամբ ի խառնելիս իւր, և ասել. որ որ անդգամ իցէ, եկեսցէ առ իս։ և ցոլոփասար մատեան ասէ, եկայք կերայք ի հացէ իմմէ, և արբէք զգինի իմ զոր խառնեցի ձեզ։ Առակ. Թ. 1-5։

Զբանս առն բաժակով պատարագ մատուցանելոյս վերայ հեղինակին գրածներն եթէ Լատին թարգմանչին յաւելուածք չէ, խիստ անյարմար է և աւելի գրոց հարազատ խնամատարն գտաբ։ Ինչպէս յայտնի է ասելի գրոց մեկնութեանց քիչ շատ հրատարակութեան ունեցող բանասիրաց։ Ինչպէս և օրինակի համար ս խառնեաց ի խառնելիս զգինի իւր ս բառը, զոր թարգմանիչն խառնել բառին մէջ պարունակեալ ջուր կ'ենթադրի, իսկ ՆԵՐԱԼԻՆ Լամբրոնացի որ Հռոմայ եկեղեցւոյ Քառապով և Հանգամանս կը կարծուի, պարզապէս կը մեկնէ խառնել բառը։ «Խառնեցի՝ ասու հնա։ յայտ է թէ առաջ բրեան օրինաց նոր խոգծին և մարգարէից կանխագուշակութեանց հետևման զի հին ու խոնարհ զարգացաբին վերայ։ կ'ըսէ։ խառնեցի ու ապատարեցի իմ ուխտս... և այսպէս հինն ու նորը իրարու հետ խառնուեցան»։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՔԵԼՈՅ ՊԻ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

(Շարունակութիւն. տես թիւ 9)։

ԺԹ.

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

Աստուած սիրուն հօր մը պէս ելքնէրկ ասեղծեց զմեզ. մեր կամքը իրեն կանոնը հետ մէկ պիտի ըլլար, ու մրքերնիս ամէն բան պիտի կարենար ընթռնել. բայց մարդս մեղանչեց և իրեն պատաժն եղաւ միշտ ելքնէրկութեան փոխարէն և ոչ ելքրէք ամբողջապէս անոր հանելի. կամ զէ բարին գործել՝ և մեկայ կողմանէ դէպ ի չարն կը դիմէ. ամէն բան կու զէ գիտնալ՝ և ամէն հարկաւոր բաներու մէջ ալ տարտէր է։ Այսպէս հանար կատարեալ ելքնէրկութիւն երկրիս փոշոյ չկրնար ըլլալ։ բայց այնչափ աւելի ելքնէրկութիւն կը մնանենք, որչափ որ մեր միտքը ա նուսկ կը մտածենք՝ որ կարելի եղածին չափ շատ բանի խելք հասցրնէ, որ որչափ որ մեր կամքը ի բարին կը վարժեցընենք ու կը նայինք որ նոսա մարմնոյ ախորժելիքներ չըլլայ մեր բարի գործերուս պատճառը։ Այնպէս ելքնէրկութեան փոխարէն՝ իրաւամբ պէտք է ասել զի մեր մարդը ի բարին կը վարժեցընենք։ Ինչպէս ելքնէրկութեան փոխարէն՝ իրաւամբ պէտք է ասել զի մեր մարդը ի բարին կը վարժեցընենք։ Ինչպէս ելքնէրկութեան բարոյական հանար եմք ի մեզանչելու համար, ասկայն Աստուծոյ եմք։

Ի յաջորդն։

digitised by A.R.A.R.@

Ի.

ԿԱՏԱՐԵԼԱՓՈՓԵԼ ԶՄԱՐՄԻՆ

Աբիատոնեմ Թագաւորը երբոր Կուբանցւոց յաղթեց, որպէս զի մէյ մ՚ալ իրեն բռնաւորական լուծէն չըկարենան խաղալիլ, այն խաղերը որ մարմինը կը զօրացընեն, բոլորն ալ ապրիլել ուզեց, որ ինչուան քսան տարու ան հասակին միայն զեղեւոր Թեանց եռեւելեան, կառք նստին, սանդրաս ին ու կանանց պէս զարդարուին։ Վասն զի բռնաւորը գիտէր որ՝ եթէ մէկը մարմնով մեղկ ըլլայ, այնպիսին նաեւ միտքով ու կամքով ալ տկար ու խոնջ կ՚ըլլայ, ուր ընդ հակառակն՝ ով որ հաղթաշուրթեան կը կրթէ մարմինը, անիկայ հոգւովալ կայտառ ու զուարթ կ՚ըլլայ, և բնականապէս արիութիւն մը կ՚ունենայ զարին դրծելու ու հարէն խորշելու։ Վասնի որ ատենիդ է, ով պատանեակք, ջանացէք որ մարմինիդ ալ առողջ, կայտառ ու երագաշարժ պնդացանէք ու անանկ ալ պահպանէք։

Առողջ ըլլալու համար պզտիկուց հիմնակուրնէ զձեզ մարրութիւնն վարժեցուցէք, շարժմունք ըրէք, ձեզի համար ախորժելի բլլան բնութիւնն ելեւ սիմնելն, ու սիրեցէք լուսոյ պայծառութիւնը ու գեղեցիկ ապատօդը, մոռցեցէք որ ձեր մարմինը Աստուծոյ ամենէն գեղեցիկ գործին է։ Կրնաք արդեօք մարմինիդ այնպէս ապատեղել ու նուաստացընել, գարշելի Թեանց եռեւելեալով, որ ինչուան գաբ ալ ամրշնաք։ կու գէք որ կենդանեաց նմանիք որկրամոլութեամբ ու խառնակեցութեամբ։ Որկրամոլնելուն ու գինոփլեերուն վրայ մէյմը նայեցէք։ ինչ խեղճ արարածներ են։ Գեղեցկութիւնին կը կորսընցընեն, ուժերնին կ՚իյնան։ շունչերնին գարշահոտ, խելքերնին ցնդած։ հարարտ մեկ նեղութիւն կը քաշեն։ Իրենց ամօթալի ախորժակը գոհ ընելու համար գիրերնք վասն զի մէջ կը գնեն գէշ գործքեր ընելու։ Բարեկիրթ մարդկանց դիմացն ելլելու կ՚ամչնան, կամ թէ ամենեւին ընդունելութիւն չեն գտնար։ որով այսպէսով կը կորսընցընեն ու բիշնելուն սէրը։ իրենց յարգն ու խելքերնին։ Խառնաբնաց մարդու մը ոչ բան մը կը վնասահի։ կամ ապջիկը հարսնու թեան կուտայ, կամ վաճառականու թեան ընկեր կ՚առնէ զինքը։ վասն զի եթէ վընաս մը հանդիպի ելլայ։ ամենքը իրեն վրայ կը կասկածեն։ որովհետեւ այնպիսին քիչ կը վստահի։ կարօտութիւնը կը շատցընէ, ազատութիւնը կը կորսընցընէ։ ու բիշնելուն մեռանելու կը սարսռուի։ որպէս զի իրեն ախտերը կարենայ պարարել։ Յիմնէն ու միշտ լաւ եմ որ կ՚ըսեն։ Լիւ մը էրիրէ՝ էրէք մարդ՝ ոչ՝ էրէք կը նոպի։

Ընդհակառակն բարեկիրթ մարդը առողջ։ զուարթ ու մեծարգոյ է։ քիչ ծախք կ՚ընէ ու շատ կը վաստակի։ երկար կ՚ապրի ու ամէն տեղ զինքը սիրելիացով կ՚ընդունին։

Այնպէս շահաւորութիւն բանեցուցէք նաեւ աշխատութեանց, հանգրաստուան, հանճարոյց ու սիրոյ մէջ։ մանչ ծնուելու թիւնը, նախանձը, բարկութիւնը և բոլոր սխալները մարդուս առողջութիւնը կը խանգարեն։ իսկ ընդհակառակն շահաւոր շարժումն ու աշխատութիւնը աւելի կը զօրացընեն։ Օդոյ ու պարապարտ մարդիկ անդործանական կղզիանքներու կը նմանին, որոնցմով երբէք բանալ գոյելու հարկ չըլլայ, ու երբոր ուզեն գոյել կամ բանալ ժանգոտած ըլլալնին չեն դառնար։ ահա աշխատութիւնն է ոսքը ուշադ քաղցր է հանգիստը։ Ով որ զարաած է, այնպիսին բաց ի մարմինը զօրացնելէն՝

digitised by A.R.A.R.@

եթէ գլուխն գժբաղդութիւն մը հանդիպելու ըլլայ, ինքզինքը ոտքերու կերպը կը գտնայ. ժամանակ չունի դէշ ըլլալու ու ձանձրութիւն բաղդ չունի. իսկ ընդհակառակը ով որ ինքզինքը դրդանայ կը վարժեցնէ, որ և իցէ պզտիկ բան իրեն դէշ կու գայ. համ մը չառնէր, կը ձանձրանայ. ու երբոր բանի մը կարօտ ըլլայ, անդամները թուլցած չեն ծառայեր ու այնպէսով կը մնան։

Վերջապէս կը տեսնուի այս աշխարհ. եթէ միշտ շարունակեալ ատաղիկ լուսոյ մը մէջ ըլլայ, ոչինչ ատաղիկ աչքդ կ'առնէ՝ որ ետքը կը կուրանայ. ընդհակառակն միշտ խաւարն ու մութութիւնն ալ նոյնպէս կը կուրցնէ. ատանկ կ'ըլլայ նաեւ բովանդակ մարմնոյն ալ. հաւասարապէս կը վնասէն մարմնոյս եթէ բնաւ շաշխատելը, և եթէ չարխաղանց աշխատելը։

Վարժեցուցէք զձեզ ամէն բան շուտ մը և մէկէն ընելու, այսինքն ոչ կատարար, այլ առանց ժամանակ կորսընելու և առանց տատամսելու։ Օրացը քիչ մը աս բանէս կը տընդանայ քիչ մ'անոր (1) ու բնաւ բան մը դրուս չհաներ։ Ինչպէս օր տատնապես մը տեսայ որ նորաժողով զգրքերը կը կարդայէր, ու կը յանձնէր իրենց որ երիվայրերուն գրքերուն մէջ չընեն։ Ասիկայ մեծի խիստ պակասութիւն խորհուրդ մը երեւցաւ մարդկանց գործելու, մարդ կայնի ծուռտարութիւնը զարգացնելու ու մեր կարեւորագոյն դրամագլխին իսնայելու՝ որ է ժամանակը։

Արեւուն մը մէջ որ մնաս՝ նոյն և առաջ կը տարտարիս, վախնալով որ չըլլայ թէ մարմնոյդ պէտք եղած չարքաշութիւնն չկարենաս վարժեցնել. բայց

(1) Խմասաց շփոթութիւն մի կ'երեւի օրինակողին մէջն։

չեն գիտեր որ առաջ մը կայ որ կ'ըսէ թէ. Ով վարդ կրծնոնի. չեն գիտեր թէ կրժուութիւնն որչափ դժայարանքը կը կատարեցուցէ։ Թէ որ հիւր, դերձակը, գորգիչը, շուտ մը ու աղէկ կերպով կ'ընեն կը մնացընեն, ինչ որ անվարժ մը երկար ժամանակի մէջ ու դէշ կերպով կ'ընէ նոյն բանը. առաջ ըսել չէ թէ մարմիններն տարբեր է, հապա թէ առջինները նոյն բանին մէջ կրթուած են։ Ուրեմն անդամ որ դպրոց գացիր, աչքդ և ոչ իսկ այբբենէն կրնար զատել. քիչ քիչ վարժութեամբ նայէ հիմայ ինչպէս շուտ շուտ թղթերը կը դարձընես։ Այսպէս թէ վարժութեամբ ու կրթութեամբ ինչ ատաիճանի խաղաւնութիւն կ'առնու երդիչներու ձայնը, պատկերհանները աչքը, որսորդներուն ականջը, և նուագարան զարնողներուն մատները. կ'ուզեն տեսնուիլ. թեւերդ ու ոտներդ կատարեցուցէ։ կրթէ ու մարժեցու զքեզ։

Կը շարունակուի։

Ամենասիրելի Արբաղան Պատրիարքն՝ որ քանի մի ամսէն ի վեր Յիդիպտոս կը գտնուի սուրբ Աթոռոյս ուխտական կալուածական իրաւունքները ձեռք բերելու յաջողով, որ քանի մի տարիէն ի վեր է անխնամ թողուած էր հանգուցեալ նախորդ Պատրիարքաց անհոգութենէն. երկրորդ անգամ Խարձրապատոնս Խրոմիմին տեսութեան երթալուն, Նորին Խարձրութիւնը Հապէշստանի խնդրոյն մասին կ'առաջարկէ Ամեն. Արբաղանին որ երկրորդ նամակ մի եւս գրէ, և կը խոստանայ որ ինքն եւս իւր կողմէն գիր գրելով առ Թէոդորոս Թագաւորը՝ յաւուրկ ուրիշանգակով խրկէ ի Հապէշստան, և Գոնդ. Խոտակ եպիս-

digitised by A.R.A.R.@

կոպտութիւն և ընկերացը վերայոք եւս տեղեկութիւններ ստանայ։ Կը յուսամ որ յիշեալ Դամենկներն ապրելն դրաւելով խրկուեցան, և մեռելս գտնէ մեր Նուխրակայ վիճակին վերայոք լուր մի կը ստանամք։

Ընդհակառակ շաբթու խանդիրէն ժառանգաւոր աշակերտ մի հասաւ, այն է Գէորգ Փոփովիչ, որ բաց ի խիստ տվրտական վիրաբուժութենէ՝ տեղւոյն բժշկին կողմէն եւս վիրաբուժական բերուած էր հետը, զոր Ս. Աթոռս բժշկին կողմէն եւս տրուած վիրաբժշկութիւն հետ հաս կը հրատարակէ ի տեղեկութիւն յիշեալ պատանեւոյն ծնողացը։

Ամենայարգելի Սրբազան Հայր։

Տեղին միջոցաւ ինձ ներկայացած Յառաջաւորաց դպրոցի աշակերտացս Խանդիրլի տէր Յարութիւնեան Գէորգ պատանւոյն քաջառողջութիւնը, և բնութիւնամբ ջղային զօրութիւնը, ամենեւին տեղն ոչնչով կը վիճակուի։

Ն.....

16 Հոկտ. 1867։ Ս. Փիրոգեան

Ընդ. Ս. Բ.....ն Ն.....ովէնայ։

Le soussigné, Docteur en médecine, demeurant à Ismail, déclare que le sieur Géorge Popovitz, né à Ismail, agé de 16 ans, d'une constitution bonne et d'un tempérament sanguino-bilieux, est vaccuiné dès son enfance, et exempt de toute maladie. En foi de quoi je lui ai délivré le présent certificat pour servir et valoir ce qui de raison.

Ismail le 13 septembre, 1867.

L.....

Տաղ Նէրսէսի հայրապետի, ի Լուսաւորչի Աշխարհէն։

Հնչմամբ ձայնիս բերկրանաց
Գովեմք զՀայրն շնորհաց։
Երգեմք զկերպս հրճուանաց
Հայրապետին սրտիցն անաց։

Որ ի հօրէն ծնաւեալ բարի
Լուսաւորչին Գրիգորի,
Առնչեալ պարտս զ հրաշալի,
Եւ բարեաւեալ ծայրագոյն։

Հօր փոխանակ եղեալն
Հոգեւոր դպրութեան Յիսուսի,
Խստաբար մեղայց աշխարհի
Լուսաւորն քանին հազարի։

Ներսէս՝ Յաղթն Խորայեցի,
Կամ մարգարէն Սամուէլ,
Յորմէնն ընտրելոյ.
Զ կենաց աշխարհի սահելոյ։

Ներսէս հրեշտակ ի յերկնից,
Մաքուր վարուք ի յերկրի,
Անեղեալ զլսանքն Յիսուսի՝
Ըստ Յովհաննու սիրելի։

Ներսէս խոնարհ հեզ հոգի,
Յարամ Աստուած բնակելոցի,
Բերան լեզու քաղցրախօս
Մեղաւորաց յուսադրող։

Սուրբ հայր դքեզ ազաչեմք,
Որդիս անեղեալ պատասխանեմք,
Յանձն արացուք զկենաս մեր
Ի փրկաւորեանս զմեզ փրկել։

Ի բանիս կարգաց խորհրդով
Զեկեղեցիս սուրբ Հաւատով
Ամրացուցեալ ի գայթից
Եւ յանուրդոյ հերձուածոց։

Զ հաւատս ամբիծս արացես,
Եւ զիմաստս պահեցես,
Զ իշխանս որ մեզ են դատող՝
Արդարութեամբ խրատեցես։

Զ ժողովուրդս հանճարոյն
Կոչես ի սէր միութեան,
Գործել զարարս անբասիսն,
Փառք Աստուծոյ անխոնջեան։

ՊԱՆԴՈՒԽՏ ՄԵՆԱՒՈՐ
Ի ԳԻՇԵՐ ԱՄՊԱՄԱՆ.

Ի մեծի սեւ ամպոյ գիշեր գաւնագին,
Մինչ ասաղդ հանցն ընդ ամպովք ծածկին,
Գանգս խուռ յուսահատ հանուկ յորտորանս,
Ձեռն ի ծրնաւի հեկեկամ ակնոցս։ —

digitised by A.R.A.R.@

Մի՛ կնկնցնարաք մեծութիւնդ,
Հարածեցայք տիրութիւնք։

Զուրկ Ի հարենեաց, մնցրական գրիչց։
Շէ՛ն ինձ բաւ Ի սարտ յաջողիլք այս վերոց։ . .
Ընդ ամենաւ ազէտս գրեցեալ ամ Երկինք։
Եւ դադարեցին քոյդ ըստ առնելիք։
Մի ըշանթիս կծցականց
Մի ուրեմն չիս Ի բարձանց։

Ո՛վ ահեղագոյն որոտմունք ահեղ։
Ո՞չ ընդառնալիքդ։ ՝Ի՞ գՀԼՈՒ յանմեղ
Թափանել կամիս ըշխուր բարկութեան։
Եւ որոց մեղաց հշուէր դուք փոխան։
Մի՛ մոլ Երկինք։ մի՛ ուրախ։
Մի՛ ուրեմնցիս ըշանթիս։

Բարի՛ թափանութեան ապարդարդ որոտս
Ո՛չ լսեն երկինք։ ոչ երկիր զալիս
Ա՛հ։ հեղձամղձուկ ձայնս ապեկլատաք
Ընդ ձայնիւք ամենայն հարաւ առաքեաք։
Ոխերիմք ինձ արարածք
Գոգցեալ մերժեալ պիս Աստուած։

Ադ իմ արտասուաք թորեցին յաչաց։
Մինչեւ Ադարիէն եկեալ առ իս յաչս։
Մինչեւ Գեբրաէլն ընդ իս հաշտեցի։
Որս արտասուաք իմ դադարեցի։
Յամենայն ինձ որ ցնծութեան
Ծագի արիի խնդութեան։

Կ. Ց. Ե.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս կատարիչ Վսեմ. Նա պիտի փաշայն եկած օրէն ի վեր կ'աշխատի միշտ բարեկարգութեան շաղին մէջ մտցընել այն զեղծմունքները, որ ապրած մնած են՝ ինչպէս ամէն տեղ, նայնպէս և քաղաքիս մէջ նախորդ կառավարութեանց անհոգութենէն։ Առաջին գործն է փողոցաց և շուկայից մաքրութիւնը հոգել. երկրորդ՝ գլխաւորապէս իւր ուշադրութիւնը դրած է, ուսուցչաց և ուրիշ ազատելի վաճառաց գնահատութիւնը (նարխը), որոց համար յառաջ յանձնաժողով մի կազմեց մէկ մէկ արհեստաւոր մտրիկ ընտրելով իւրաքանչիւր ազգերէն, և նոցա յանձնեց վաճառականաց ուսուցաց հոգել, որ անաչառ ապէս իրենց պաշտօնը կատարեն. և եթէ չափոց և կշռաց մէջ թարգափոխներ և պարշտալ գնէն աւելի ծախողներ գտնեն, յանձնաժողովին տեսչութեամբն անունց տուգանքը որոշուի։ Այնանապէս և զատուէր եղած է որ իւրաքանչիւր արհեստաւոր իւր արհեստին վերաբերեալ փոնտարքէն ի գան ուրիշ ցեղ ապրանք չծախէ։ Մենք գոհ եմք նոյն կարգադրութիւններէն, և առաւել գոհ պիտի լինիմք, եթէ արդիւնաւորուած տեսնենք Վսեմ. կառավարչին բարեխնամ ջանքերը, արդարացի պատիժը տալով կանոնազանց խանութպաններուն, ուրանք լաւ դիտեն խաբել շուկայի տեսչաց տեսութիւնն և սիրալ՝ որ և է կերպիւ։

— Այն միջոցիս խիստ մեծ գործունէութիւն մի կը տեսնուի սուրբ Յարութեան տաճարի երկաթի նորաշէն գմբէթին նորոգութեան վերայ։ Արդէն երկաթ շղթաներքը (չէմպէր) զետեղուած են, և կը մնայ անոնց վերայ անցընել երկաթեղէն տախտակները և ապա արձնով պատել. կը յուսացուի որ մէկ ամսէն բոլորովին կը լրանայ։ Այդպէսէն գմբէթնախկին բարձրութենէն խիստ աւելի բարձր ուհայակապ գիրք մի պիտի ունենայ։

— Կը փութամք նաեւ ուրախութեամբ աւետելու, որ ինչպէս արդէն գրած եմք Յոպպէի ճամբուն շինութիւնքն սկսած իրը, մեծ գործունէութեամբ կը շարունակուի, և սուրբ քաղաքէս ելլելով մինչեւ ի կիրծը՝ որ լիրանց գոտիներու մէջէ կ'անցնի և բան մեծի մասին քարաժայռեր են, անընդհատ աշխատութեամբ կը բանուին, իւրաքանչիւր մասը իւր մնուակոյ գիւղոյ բնակչաց յանձնելով։ Այս օրինակ երգութեամբ տարակոյս չկայ, որ երկու ամիս չանցնիր՝ ամբողջ կը լրանայ։ Արդէն ճամբորդներուն ուղեւորու-

digitised by A.R.A.R.@

թիւնը դիւրացուցած է. և Աստուծոյ յետ այսպիսի փասանգներն և անհանգստութիւններն եւս անհետ ընելով. բարեպաշտ ուխտաւորաց պատճառս չպիտի թողու. թէ արեւելեան և թէ արեւմտեան քրիստոնէից. իրենց սրտին հպեւորդ փափաքները կատարելու մտադիր։ Այդպէս կը խօսուի. թէ բազմութիւն Աւրուպայէ կը պատրաստուին կրօնական ճամբորդութիւն ընելու Խաչի քաղաքս. որոնց մէջ կան նշանաւոր և հարուստ անձինք։ Այնպէս և Յունաց ազգէն բազմութիւն խուռներաց գալուստն կը սպասուի։

— Սադի ու Վիրլիկոյ կողմերուն ապստամբութիւնը խաղաղեցաւ. Շէխ Տասպ մեծահարուստ արաբացին՝ որ ապստամբութեան գլուխն էր. վերջապէս զգալով որ իւր անհաստատութիւնը չպիտի կարէ ընդ երկար տեւել ընդդէմ հզօր Տէրութեան. վերջապէս՝ և քանի մի երեւելի անձանց երաշխաւորութեամբ գնաց ի Դամասկոս առ Սուլեմ. կուսակալն։ Կ'ըսուի թէ մեծ պատուով ընդունուած է Սրին Սուլեմութենէն, և թէ որոշուած է չորս հարիւր անկանոն զօրաց գնդապետ կարգելը վերջը. բայց սոյն վերջի լուրը դեռ սուտ գութեան կարօտ է։

— Աբաթայոյ մի ապստամբութիւնը։ Անցեալ ամսոյն մէջ Յորդանանու կողմերէն Շէխ մի ի Էթելէմ կուգայ, և հոն Ճայու մի տուն կը հիւրասիրուի. ետ դառնալուն Մոսկա. այս է Ճայուն անունը, հետը կ'ընկերանայ Շէխին մինչեւ իւր գեղի բնակարանը, և ետ դառնալու միջոցին իւր ձին կ'ինկնի կրտակի անակնկալ ցաւով մի. և Շէխը իւր ընտիր սրաբացի նժոյգներէն մին իրեն կը պարգեւէ, որոյ արժանութիւնն հարիւր լիրայ է կ'ըսուի։

— Աբժ. Տիգրանեան Պղտիչ վարդապետի վերայ գոհութիւններ կը լսեմք Օմիւռնիայէն. ուր Պոլիսէն դառնալուն հանդիպած է, և իւր աղգասիրական ընթացքովն ու ցոյցերովն այն ամենայն գրաւած է ժողովրդեան բարեպաշտական ոգին. որոնք փութացեր են ի նոպատս Օէյմինցոյ՝ բայց ի հարկուստ դրբերէն՝ բաւական դրամական օգնութիւններ եւս ընել ա նոնց։ Այս ուղղաւորոյ մէջ նշանաւոր է Օմիւռնիոյ երեւելի վաճառականներէն Թումասեան մահտեսի Յակոբ Աղայն որ մանաւանդ առ ուսուցի կրգալն. այն բարեպաշտ անձը Օէյմինցւոյ դպրատանց յառաջադիմութեան համար քառասուն օսմանեան լիրա նուիրելէն յետոյ, խոստացած է ամէն տարի հատուցանելու նոյն գումարը։

Յիշեալ Աբժ. Մկրտիչ վարդապետը ամսոյս 28 ին հասաւ ի Ս. Աթոռս, յուխտ և յերկրպագութիւն Ս. Տեղւոյ. ուր քանի մի օր մնալէն յետոյ պիտի վերադառնայ ի Օէյթուն։

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐ

Լուսաբանէն սա Արբասան Պասարիպը Հայրն խրկուած Թոյմը ու Փէլ—Սէլ լրագրին մէջ կը կարդանք՝ թէ Գեր. Խաչատուր եպիսկոպոսը և իւր ընկերքը սիրով ընդուներ է Թէոդորոս կայսրը. և թէ նոցա միջնորդութիւնը յաջողելու վերայ է անգլիացի բանակարկեալ ազատութեան մասին։ Այս լուրս Թոյմի խմբագրատպութեան հաստատելով՝ կը խրատեմ զանգլիացիքը. որ Թէոդորոս կայսեր անձնական սրտաւոյն դէմ ի գործ դրած քարիզատրանքին եւս կենան և համբերին մինչեւ որ կատարեալ յաջողի Հայոց նուիրակին միջնորդութիւնը։

ՏՊԱՐԱՆԵՑԱՒ ՏՊԱՒՈՐԵԼ.

ՀԱՍՏԻՒՐԵՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐՈՒՍՏԱՆԻ ԱՄՍԱՅ ՄԷՋ ՊՈՒՍՏԱՆԱՑԻՆ

digitised by A.R.A.R.@